ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թ. փետրվարի 11-ի N 25-Ն հրամանը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Նոր Նորքի տարածքային բաժինը (այսուհետ՝ ՍԱՏԲ) սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով իր սպասարկման տարածքում (այսուհետ՝ տարածաշրջան) Համաձայնագրի կողմեր հանդիսացող սուբյեկտներին՝ գործող պետական կառավարման հանրապետական մարմինների տարածքային ստորաբաժանումներին և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպություններին, ինչպես նաև ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Կողմեր) հրավիրում է հայտագրվելու և ձևավորելու համագործող խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ):

Խորհրդի կազմում պարտադիր ընդգրկվում են տարածաշրջանում գործող ՀՀ կառավարության 2015թ.-ի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշման 1-ին կետով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք:

Խորհուրդը գործելու է խորհրդի անհատական կազմը ձևավորելուց հետո 2 տարի ժամկետով:

Կողմերը խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ իրենց առաջարկությունները և հայտերը կարող են ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Նոր Նորքի տարածքային բաժին (ՍԱՏԲ) մինչև 2016թ.-ի հուլիսի 6-ը (հասցեն՝ ք. Երևան, Գայի պող. 19շ., հեռ.: 011-51-86-35):

Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են.

ա) սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձը.

բ) սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացումը.

Գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներառված է Տարածքային մակարդակով սոցիալական համագործակցության Համաձայնագրում, որը տրամադրվում է Սոցիալական համագործակցության Համաձայնագրին միացած Կողմերին:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
սոցիալական աջակցության Նոր Նորքի տարածքային բաժին
Հասցե Գայի 19,
էլեկտրոնային հասցե nor_norqi_ststsg@norq.am,
Հեռախոս 011-51-86-35